ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱԶՄԻՆ

Հ. Ա. ՕՐԲԵԼԻ

Մ. Խ. ԱԲԵՂՅԱՆ


Լ. Ա. ՕՐԲԵԼԻ


Հ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

Ա. Ի. ԱԼԻԽԱՆՈՎ

Ս. Ս. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ի. Վ. ԵՂԻԱԶԱՐՈՎ

Ա. Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

Խ. Ս. ԿՈՇՏՈՅԱՆՑ

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Գ. Ա. ՂԱՓԱՆՑՅԱՆ

Ա. Հ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

Լ. Ա. ՕՀԱՆԵՍՈՎ

Ա. Ջ. ԹԱՄԱՄՇԵՎ

Մ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ա. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆ

Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ. Ն. ՊԱՖՖԵՆԳՈԼՑ

Վ. Հ. ԳՈՒԼՔԱՆՅԱՆ

Հ. Ք. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Վ. Ի. ԻՍԱԳՈՒԼՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. Ա. ՕՐԲԵԼԻ

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Հովսեփ Աբգարի Օրբելին ծնվել է 1887 թվականին։

Հ. Ա. Օրբելին Պետերբուրգի համալսարանի սանն է։

1906 թվականից նա իր ուսուցիչ Ն. Յա. Մառի ղեկավարությամբ եռանդուն մասնակցություն է ունեցել Անիի արխեոլոգիական պեղումներին։ Այդ ժամանակվանից ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու անունը կապված է Ն. Յա. Մառի անվան հետ, որի աշակերտը և ուսմունքի հետևողական շարունակողն է նա։

Հայաստանի արխեոլոգիայի, ճարտարապետության պատմության, ֆոլկլորի, ֆիլոլոգիայի, էպիգրաֆիկայի, Հայաստանի պատմության վերաբերյալ Հ. Ա. Օրբելու բազմաթիվ հետազոտությունները արժեքավոր ավանդ են սովետական և համաշխարհային գիտության մեջ։

1934 թվականից Հ. Ա. Օրբելին ղեկավարում է Պետական Էրմիտաժը։

1938 թվականին Հ. Ա. Օրբելին ընտրվեց ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի նախագահ։ Այդ պաշտոնում նա մեծ ջանք գործ դրեց ֆիլիալը Սովետական Հայաստանի գիտական մտքի [illegible] կենտրոն դարձնելու համար։

Առաջավոր գիտության ականավոր ներկայացուցիչ ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու անունը լայնորեն հայտնի է, ինչպես ՍՍՌՄ—ում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. Խ. ԱԲԵՂՅԱՆ

Ակադեմիկոս Մանուկ Խաչատուրի Աբեղյանը ծնվել է 1865 թվականին։ Նա ավարտել է Իենայի համալսարանը և ստացել է փիլիսոփայության դոկտորի կոչում։ Ավելի քան 20 տարի նա Երևանի Պետական համալսարանի պրոֆեսոր է։

Մ. Խ. Աբեղյանը մի շարք կապիտալ հետազոտություններ է գրել հայկական դիցաբանության, ֆոլկլորի, գրականության ու լեզվի ասպարեզում։ Մ. Խ. Աբեղյանի այնպիսի աշխատությունները, ինչպես «Ժողովրդական խաղիկներ», «Գուսանական ժողովրդական երգեր», «Հայերեն լեզվի տաղաչափությունը» և այլն նրա համար կայուն և պատվավոր տեղ են վաստակել հայագիտության պատմության մեջ։

Անգնահատելի է Մ. Խ. Աբեղյանի դերը հայ ժողովրդի մեծ էպոս Սասունցի Դավթի բազմաթիվ վարիանտները հավաքելու և հրատարակելու գործում։

Մ. Խ. Աբեղյանի վերջին աշխատություններից մեկը՝ «Հին հայկական գրականության պատմությունը» խոշորագույն ավանդ է հայկական ֆիլոլոգիայում։

Ակադեմիկոս Մ. Խ. Աբեղյանը անդադար եռանդով շարունակում է իր բեղմնավոր աշխատանքը հայ ֆիլոլոգիայի գծով գիտական նոր կադրեր պատրաստելու ասպարեզում։

Մ. Խ. Աբեղյանը Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ է։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Լ. Ա. ՕՐԲԵԼԻ

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Լևոն Աբգարի Օրբելին ծնվել է 1882 թվականին։ Նա մեր երկրի խոշորագույն գիտնականներից մեկն է։

Լ. Ա. Օրբելու հետազոտական աշխատանքը ընդգրկում է ֆիզիոլոգիական բազմազան պրոբլեմների շրջան։ Նա ռուս ականավոր ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովի ուսմունքի շարունակողն է։

Լ. Ա. Օրբելու ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղը գրավում է սիմպաթիկ նյարդային համակարգության ֆունկցիաների նրա հետազոտությունը։ Նա ստեղծել է սիմպաթիկ նյարդային համակարգության ունիվերսալ ադապտացիոն-տրոֆիկ ֆունկցիայի մասին [illegible] կոնցեպցիա, որը հսկայական ազդեցություն է գործել ժամանակակից ֆիզիոլոգիայի վրա։ Ակադեմիկոս Լ. Ա. Օրբելու աշխատությունները լայնորեն հայտնի են արտասահմանում։

Ակադեմիկոս Օրբելին խիստ մեծ աշխատանք է կատարում երկրի պաշտպանունակության ամրապնդման և ավիացիոն [illegible] հետ կապված հարցերի ասպարեզում։

Լ. Ա. Օրբելին ստալինյան մրցանակի լաուրեատ է։ Խիստ արժեքավոր են նրա նշանավոր ծառայությունները սովետական ֆիզիոլոգների կադրեր պատրաստելու գործում։

Լ. Ա. Օրբելին ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի փոխ-պրեզիդենտն է և ղեկավարում է [illegible] Բժշկական Ակադեմիան։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Հակոբ Հովհաննեսի Մանանդյանը ծնվել է 1873 թվականին։ Ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը և Յենայի համալսարանի պատմական ֆակուլտետը։

1920 թվականից մինչև 1930 թվականը Հ. Հ. Մանանդյանը եղել է Երևանի Պետական համալսարանի պրոֆեսոր։ Հետագայում նա եռանդուն մասնակցություն է ունեցել Սովետական Հայաստանի մի շարք գիտական հաստատությունների աշխատանքներին։ Հ. Հ. Մանանդյանի «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», «Տիգրան երկրորդը և Հռոմը» և այլ աշխատությունները նրա համար Հայաստանի նշանավոր պատմաբանի անուն վաստակեցին և նրան բարձրացրին սովետական գիտնականների առաջավոր շարքերը։

Հ. Հ. Մանանդյանը «Հայաստանի պատմության քննադատական տեսություն» կապիտալ աշխատության հեղինակն է, որի երկու հատորն արդեն պատրաստ են տպագրության։

Ակադեմիկոս Հ. Հ. Մանանդյանը Հայկական ՍՍՌ Գիտության վաստակավոր գործիչ է։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Ի. ԱԼԻԽԱՆՈՎ

Աբրահամ Իսահակի Ալիխանովը ծնվել է 1904 թվականին։ 1930 թվականին ավարտելով Լենինգրադի պոլիտեխնիկ ինստիտուտի ֆիզիկո-մեխանիկական ֆակուլտետը, նա աշխատել է Լենինգրադի ֆիզիկո-տեխնիկական ինստիտուտում որպես գիտական աշխատակից։ 1935 թվականին ստացել է պրոֆեսորի կոչում և ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան։

1939 թվականին ընտրվել է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի անդամ-թղթակից, իսկ 1943 թվականին իսկական անդամ։

Ա. Ի. Ալիխանովը ունի ավելի քան 30 գիտական աշխատություն։ Նրա «Նյութերի նուրբ շերտերի ռենտգենյան ճառագայթների ներքին լիակատար արտացոլման հետազոտությունը» աշխատությունը ռենտգենյան ճառագայթների արտացոլումների՝ համաշխարհային գրականության մեջ հայտնի, լիակատար ու ճշգրիտ հետազոտություն է։ 1934 թվականին Ա. Ի. Ալիխանովը որպես դելեգատ մասնակցել է ֆիզիկոսների Լոնդոնի համաշխարհային կոնգրեսին։ 1933 թվականին նա իր լաբորատորիայում սկսել է զբաղվել ատոմային միջուկի ֆիզիկայի հարցերով։ 1942 թվականին Ա. Ի. Ալիխանովը ղեկավարել է Արագած բարձրացած էքսպեդիցիան՝ կոսմիկական ճառագայթներն ուսումնասիրելու համար։ 1942 թվականին Ա. Ի. Ալիխանովի ղեկավարությամբ Երևանում Մոլոտովի անվան Պետական համալսարանին կից կազմակերպվեց ֆիզիկայի ինստիտուտ։ 1941 թվականին, ֆիզիկայի ասպարեզում մատուցած աչքի ընկնող աշխատանքների համար Ա. Ի. Ալիխանովին շնորհվեց ստալինյան մրցանակ։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. Ս. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ստեփան Սերգեյի Մալխասյանը ծնվել է 1857 թվականին։ 1880 թվին նա ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը։

Հայագիտության ականավոր ներկայացուցիչ, ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Ս. Ս. Մալխասյանը ավելի քան 50 տարի աշխատում է հայկական ֆիլոլոգիայի հետազոտության բնագավառում։ Նրա գրչին են պատկանում մի քանի տասնյակ արժեքավոր աշխատություններ, մասնավորապես լայն հռչակ է վայելում նրա «Գրաբարի հոլովումը և խոնարհումը», Մովսես Խորենացու հարցի շուրջը և այլ աշխատություններ։

Գիտության մեջ մնայուն արժեք ունեցող ավանդ է Ս. Ս. Մալխասյանի կազմած «Հայոց լեզվի բացատրական բառարանը» 400 տպագրական մամուլի ծավալով, որն այժմ հրատարակվում է Հայաստանի Պետհրատի կողմից։ Հայտնի են պրոֆեսոր Ս. Ս. Մալխասյանի ծառայությունները մանկավարժական գործունեության և գիտական կադրեր պատրաստման բնագավառում։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ի. Վ. ԵՂԻԱԶԱՐՈՎ

Իվան Վասիլևիչ Եղիազարովը ծնվել է 1893 թվականին։ 1916 թվականին ոսկե մեդալով ավարտել է Պետերբուրգի էլեկտրատեխնիկական ինստիտուտը։ Պրոֆեսոր է 1922 թվականից։ 1935 թվականին ստացել է տեխնիկական գիտությունների դոկտորի աստիճան։ Ի. Վ. Եղիազարովը 32 գիտական աշխատություն ունի հիդրավլիկայի և հիդրոէներգետիկայի հարցերի շուրջը։ Նա գրել է «Հիդրոէլեկտրական ուժային սարքեր» ֆունդամենտալ աշխատությունը։ Նա ստեղծել է ՍՍՌՄ-ում խոշորագույն հիդրոէլեկտրական լաբորատորիան, որտեղ անմիջապես նրա և նրա ղեկավարությամբ կատարվել են ՍՍՌՄ հիդրոշինարարության փորձեր։ Պրոֆեսոր Ի. Վ. Եղիազարովը մեծ ծառայություն է մատուցել Հայաստանի էլեկտրիֆիկացման գործում։ Նա Սևանի պրոբլեմի առաջին հետազոտողներից մեկն է և Զորագետի շինարարության մասնակիցը։

Իր մանկավարժական բազմամյա բեղմնավոր գործունեության ընթացքում որպես Լենինգրադի էլեկտրատեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր, Ի. Վ. Եղիազարովը պատրաստել է ինժեներների և գիտական աշխատողների շատ սերունդներ։

Ի. Վ. Եղիազարովը ներկայումս Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկ ինստիտուտի պրոֆեսոր է։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Գրող Ավետիք Սահակի Իսահակյանը ծնվել է 1875 թվականին։ Էջմիածնի ճեմարանում սովորելուց հետո Ա. Ս. Իսահակյանը գրականության, փիլիսոփայության ու պատմության իր պարապմունքները շարունակել է Լայպցիգի համալսարանում։

Իր գրական-ստեղծագործական աշխատանքի 50 տարվա ընթացքում Ա. Ս. Իսահակյանը ամենաարժեքավոր ավանդ է մուծել հայ գեղարվեստական գրականության գանձարանում։

Նրա մի շարք երկերը թարգմանվել են շատ լեզուներով։

Նա խորապես գիտե հայ ֆոլկլորը և գրականությունը։ Չափազանց նշանակալից է Ա. Ս. Իսահակյանի դերը հայ գրական լեզվի զարգացման գործում։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի հնագույն պրոֆեսորներից մեկը՝ Հրաչյա Հակոբի Աճառյանը ծնվել է 1876 թվականին։

Հ. Հ. Աճառյանը ունի ավելի քան 50 գիտական աշխատություն հայագիտությունից։ Առանձնապես հայտնի է նրա կազմած «Հայոց լեզվի արմատական բառարանը», որը լույս է տեսել 6 հատորով։ Հ. Հ. Աճառյանի հետևյալ կապիտալ աշխատությունը «Հայկական դիալեկտոլոգիան» է։ Ներկայումս հրատարակվում է նրա «Անձնանունների բառարան» մեծ աշխատությունը։

1933 թվականին Հ. Հ. Աճառյանը ստացավ ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի աստիճան։ Հ. Հ. Աճառյանը հսկայական աշխատանք է կատարել Սովետական Հայաստանում ֆիլոլոգների և մանկավարժների երիտասարդ գիտական կադրեր պատրաստելու ասպարեզում։

Հ. Հ. Աճառյանը Փարիզի լինգվիստական ընկերության անդամ է և Չեխոսլովակյան Գիտությունների Ակադեմիայի անդամ-թղթակից։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Խ. Ս. ԿՈՇՏՈՅԱՆՑ

Սովետական ականավոր ֆիզիոլոգ, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի անդամ-թղթակից՝ Մոսկվայի համալսարանի ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ Խաչատուր Սեդրակի Կոշտոյանցը ծնվել է 1900 թվականին։

Խ. Ս. Կոշտոյանցը մի ամբողջ շարք աշխատություններ ունի նվիրված համեմատական ֆիզիոլոգիայի հարցերին։

Խ. Ս. Կոշտոյանցը իր հետազոտություններով հարստացրել է էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի մասին սովետական գիտությունը։ Պրոֆեսոր Խ. Ս. Կոշտոյանցը իր աշխատությունների մեջ մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայի դիրքերից հետևողականորեն մերկացնում է բիոլոգիայի ասպարեզում եղած կեղծ իդեալիստական կոնցեպցիաները։ Խ. Ս. Կոշտոյանցը «Ֆիզիոլոգիչեսկի ժուռնալ ՍՍՍՌ»-ի և «Բիոլոգիչեսկի ժուռնալի» խմբագրական կոլեգիայի անդամ է։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Վիկտոր Համազասպի Համբարձումյանը ծնվել է 1908 թվականին։

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի անդամ-թղթակից Վ. Հ. Համբարձումյանը 62 տպագիր աշխատություն ունի աստղագիտության և տեսական աստրոֆիզիկայի բնագավառում։ Վ. Հ. Համբարձումյանի գրչին է պատկանում տեսական աստրոֆիզիկայի դասագիրքը, որը տեսական աստրոֆիզիկայի առաջին սիստեմատիկ դասընթացն է ռուսերեն լեզվով։

Վ. Հ. Համբարձումյանը շատ տարիներ աշխատում է Լենինգրադի Պետական համալսարանում որպես աստրոֆիզիկայի ամբիոնի վարիչ և աստղադիտական լաբորատորիայի դիրեկտոր, իսկ 1941 թվականից որպես համալսարանի ուսումնական մասի պրոռեկտոր։ Հայաստանում և Վրաստանում աստղագիտական աստղադիտարանների հիմնադրման առաջին օրերից Վ. Հ. Համբարձումյանը սերտորեն կապված է դրանց հետ և էֆեկտիվ աշխատանք է կատարել գիտական մասի ղեկավարման գծով։ 1940 թվականին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությունը Վիկտոր Համազասպի Համբարձումյանին շնորհեց Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործչի կոչում։

Ներկայումս Վ. Հ. Համբարձումյանը Երևանի Պետական աստղադիտարանի գիտական ղեկավարն է։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Գ. Ա. ՂԱՓԱՆՑՅԱՆ

Գրիգոր Ավետի Ղափանցյանը ծնվել է 1887 թվականին։

1913 թվականին նա ավարտել է Պետրոգրադի համալսարանը։ Համալսարանը ավարտելուց հետո մինչև 1918 թվականը դասավանդել է էջմիածնի ճեմարանում, որից հետո փոխադրվել է Երևան, որտեղ 1920 թվականից սկսել է գիտական-մանկավարժական գործունեությունը Երևանի նոր բացված Պետական համալսարանում։

1930 թվականից սկսեցին լույս տեսնել նրա գիտական աշխատությունները, որոնց թիվը ներկայումս անցնում է 3 տասնյակից։ Նրա խոշորագույն աշխատություններն են՝ «Ընդհանուր լեզվաբանություն», «Ուրարտուի պատմությունը», «Հեթիթական աստվածները հայերի մոտ», «Հին Հայաստանի տոպոնիմիկայի պատմա-լինգվիստական նշանակությունը», որ նրա համար հռչակ վաստակեցին Միության լինգվիստ-ֆիլոլոգների շրջանում։ Գ. Ա. Ղափանցյանը Երևանի Մոլոտովի անվան Պետական համալսարանի պրոֆեսոր է և Մառի անվան կաբինետի վարիչ։

1942 թվականին Գ. Ա. Ղափանցյանին շնորհվեց ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։

Գ. Ա. Ղափանցյանը Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ է։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Հ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

Արսեն Հարությունի Տերտերյանը ծնվել է 1882 թվականին։ 1905 թվականին ավարտել է էջմիածնի ճեմարանը։ 1907 և 1908 թվականներին եղել է Պետերբուրգի համալսարանի ազատ ունկնդիր։ Ա. Հ. Տերտերյանը 1929 թվականին հաստատվել է պրոֆեսոր։ 1943 թվականին նրան շնորհվել է ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի աստիճան։

Իր գիտական գործունեության 30 տարվա ընթացքում նա մի ամբողջ շարք հետազոտություններ է տվել հայ նոր գրականության մասին։ Ա. Հ. Տերտերյանը մոնոգրաֆիաներ ունի Աբովյանի, Նալբանդյանի, Շիրվանզադեի, Մուրացանի, Թումանյանի, Նար-Դոսի և Հովհաննես Հովհաննիսյանի մասին։ Նրա հետազոտական գործունեության էական բնագավառը հայ գրողների էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրությունն է։ 1939 թվականին լույս տեսավ նրա «Միքայել Նալբանդյանի էսթետիկան» աշխատությունը։

Խիստ նշանակալից է Ա. Հ. Տերտերյանի մանկավարժական բազմամյա բեղմնավոր գործունեությունը։ Նա Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի հնագույն պրոֆեսորներից մեկն է։

Ներկայումս նա վարում է Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի հայոց գրականության պատմության ամբիոնը։

Ա. Հ. Տերտերյանը Հայկական ՍՍՌ Գիտության վաստակավոր գործիչ է։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Լ. Ա. ՕՀԱՆԵՍՈՎ

Երևանի Բժշկական ինստիտուտի պրոֆեսոր Լևոն Անդրեյի Օհանեսովը ծնվել է 1885 թվականին։ 1904 թվականին ավարտել է Խարկովի համալսարանը։

1928 թվականին հաստատվել է պրոֆեսոր։ 1937 թվականին պաշտպանել է բժշկական գիտությունների դոկտորի աստիճանի դիսերտացիա։ Նա ունի 35 հրապարակված գիտական աշխատություն։ Լ. Ա. Օհանեսովը մեծ ծառայություն է մատուցել, ուսումնասիրելով հայ բժշկագիտության պատմությունը և սիստեմատիզացիայի ենթարկել բժշկության վերաբերյալ հին և միջնադարյան հայկական ամենաարժեքավոր ձեռագրերը։

Լ. Ա. Օհանեսովը մանկավարժական մեծ աշխատանք է կատարում։ Ներկայումս վարում է Երևանի Բժշկական ինստիտուտի պրոպեդևտիկ ամբիոնը։

Լ. Ա. Օհանեսովը Հայկական ՍՍՌ Գիտության վաստակավոր գործիչ է։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Ջ. ԹԱՄԱՄՇԵՎ

Ալեքսանդր Ջաջաի Թամամշևը ծնվել է 1877 թվականին։ 1903 թվականին ավարտել է Ռիգայի Պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական բաժանմունքը՝ գիտնական-ագրոնոմի կոչումով։

1925 թվականին Ա. Ջ. Թամամշևը ստացել է պրոֆեսորի կոչում և ղեկավարում էր Թբիլիսիի Պետական համալսարանի զոոտեխնիկայի ամբիոնը։ 1929 թ. պրոֆեսոր Թամամշևը աշխատում է Հայաստանում՝ գյուղատնտեսական և անասնաբուժական ինստիտուտներում։ Պրոֆեսոր Թամամշևը մեծածավալ գիտա-հետազոտական աշխատանք է կատարում։ Նրա գիտական բազմաթիվ աշխատություններից առանձնահատուկ արժեք է ներկայացնում Հայաստանի անասնաբուծությանը նվիրված բազմահատոր աշխատությունը։

Գիտական և մանկավարժական աչքի ընկնող գործունեության համար Ա. Ջ. Թամամշևին շնորհված է Հայկական ՍՍՌ Գիտության վաստակավոր գործչի կոչում։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ ընտրվելու պահին Ա. Ջ. Թամամշևը Երևանի Անասնաբուժական ինստիտուտի անասնաբուծության ամբիոնի վարիչն է։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Միքայել Գալուստի Թումանյանը ծնվել է 1886 թվականին։ 1911 թվականին ավարտելով Մոսկվայի համալսարանի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի բնագիտական բաժանմունքը, ընդունվեց Մոսկվայի գյուղատնտեսական ինստիտուտը, որն ավարտեց 1914 թվականին։ 1929 թվականին ստացել է պրոֆեսորի կոչում։

1937 թվականին ՍՍՌՄ Ժողկոմսովետին կից բարձրագույն դպրոցների գործերի համամիութենական կոմիտեն Մ. Գ. Թումանյանին շնորհեց գյուղատնտեսական գիտությունների դոկտորի աստիճան։ Իր գիտական գործունեության ընթացքում Մ. Գ. Թումանյանը հետազոտական մեծ աշխատանք է կատարել Հայաստանի և Անդրկովկասի դաշտային կուլտուրաների ուսումնասիրման գծով։

Մ. Գ. Թումանյանը գրել է 30 գիտական աշխատություն։

Գիտական և մանկավարժական բեղմնավոր գործունեության համար Մ. Գ. Թումանյանին շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Ալեքսանդր Աբգարի Հակոբյանը ծնվել է 1890 թվականին։ 1917 թվականին ավարտել է Պետրոգրադի պոլիտեխնիկ ինստիտուտը և ստացել ինժեներ-մեխանիկի կոչում։

1929 թվականին Ա. Ա. Հակոբյանը հաստատվել է որպես տեսական մեխանիկայի պրոֆեսոր։ 1934 թվականին «Տերմոդինամիկայի կիրառումը խառնուրդների տեսության» դիսերտացիայի համար նրան տրվել է տեխնիկական գիտությունների դոկտորի աստիճան։

Ա. Ա. Հակոբյանը ունի 28 գիտական աշխատություն։ Վերջին տարիների ընթացքում նա գրել է հույժ կարևոր մի աշխատություն «Տերմոդինամիկայի երկրորդ սկզբի մի նորովի հիմնավորման մասին»։

Բեղմնավոր աշխատանքի համար Ա. Ա. Հակոբյանին շնորհված է գիտության վաստակավոր գործչի կոչում։ Ներկայումս Ա. Ա. Հակոբյանը վարում է Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկ ինստիտուտի տերմոդինամիկայի և ջերմատեխնիկայի ամբիոնը։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆ

Արտեմ Իսահակի Ալիխանյանը ծնվել է 1908 թվականին։ 1931 թվականին ավարտելով Լենինգրադի Պետական համալսարանը, վարել է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի ֆիզիկո-տեխնիկական ինստիտուտի լաբորատորիան։

1938 թվականին պաշտպանել է ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի դիսերտացիա։

Պրոֆեսոր Ալիխանյանի աշխատությունները (ավելի քան 35 տպագրված աշխատություն) նվիրված ատոմային միջուկի, կոսմիկական և ռենտգենյան ճառագայթների ուսումնասիրությանը, հայտնի են նաև Սովետական Միության սահմաններից դուրս։

Իր գիտական աշխատությունների համար պրոֆեսոր Ալիխանյանը արժանացել է ստալինյան մրցանակի։

Վերջին տարիներս պրոֆեսոր Ալիխանյանը աշխատելով Հայաստանում, Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանում կազմակերպել է ֆիզիկայի ինստիտուտ, դրանով իսկ բազա ստեղծելով կոսմիկական ճառագայթների ուսումնասիրության համար և դնելով Հայաստանում ֆիզիկոսների որակյալ կադրեր պատրաստելու հիմքը։

Հայրենական պատերազմի օրերին պրոֆեսոր Ալիխանյանը կատարել է պաշտպանական խիստ կարևոր նշանակություն ունեցող մի շարք աշխատանքներ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ ընտրվելու պահին Ա. Ի. Ալիխանյանը Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի պրոֆեսոր է և Ֆիզիկայի ինստիտուտի դիրեկտոր։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սահակ Կարապետի Կարապետյանը ծնվել է 1906 թվականին։ 1933 թվականին ավարտել է Երևանի համամիութենական զոոտեխնիկական ինստիտուտի զոոտեխնիկական ֆակուլտետը։

1937 թվականին ավարտել է ասպիրանտուրան, պաշտպանելով գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի աստիճանի դիսերտացիան, Ս. Կ. Կարապետյանը ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի բիոլոգիական ինստիտուտում սկսեց իր գիտական գործունեությունը։ Նրա հետազոտություններում առանձնահատուկ տեղ է գրավել կերերի բիոլոգիական մշակման պրոբլեմը, նրանց թթվեցումը, ինչպես նաև գյուղատնտեսական անասունների մարսողության հարցերը։

Ս. Կ. Կարապետյանն ունի 12 գիտական աշխատություն։

Ս. Կ. Կարապետյանի հետազոտությունը «Թթվեցման [illegible] բազմազանության վրա, նրա [illegible] ֆիզիոլոգիական ֆունկցիաները», որ [illegible] 1940 թվականին, իր խորությամբ և [illegible] արժեքավոր [illegible] մեկն է այդ բնագավառում։

1938-ից մինչև 1940 թ. թ. Ս. Կ. Կարապետյանը եղել է Ակադեմիայի [illegible] նախագահության [illegible]։ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ ընտրվելու պահին Ս. Կ. Կարապետյանը հանդիսանում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի նախագահության անդամ։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Կ. Ն. ՊԱՖՖԵՆԳՈԼՑ

Կոնստանտին Նիկոլաևիչ Պաֆֆենգոլցը ծնվել է 1893 թվականին։ 1920 թվականին նա ավարտել է Պետերբուրգի լեռնային ինստիտուտը։ 1923 թվականից նա իր գիտական գործունեությունը անընդհատ կապում է Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի հետ։

Գեոլոգիական-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը Կ. Ն. Պաֆֆենգոլցը ստացել է 1935 թվականին։ Իր գիտական գործունեության ընթացքում նա գրել է 67 խոշոր աշխատություն, որոնցից 40-ը տպագրված են։ Կ. Ն. Պաֆֆենգոլցի խոշորագույն աշխատությունը Հայաստանում նրա «Հայաստանի գեոլոգիան» աշխատությունն է, ավելի քան 55 տպագրական մամուլ։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. Հ. ԳՈՒԼՔԱՆՅԱՆ

Վարդան Հովհաննեսի Գուլքանյանը ծնվել է 1902 թվականին։ Նա 1927 թվականին ավարտել է Երևանի Պետական համալսարանը։ 1933 թվականին ավարտել է բուսաբանության Լենինգրադի Համամիութենական ինստիտուտի ասպիրանտուրան և իր գիտական աշխատանքը սկսել [illegible] Երևանի ինստիտուտում։

1938 թվականից մինչև 1942 թվականը Վ. Հ. Գուլքանյանը աշխատում է որպես [illegible] գիտական ինստիտուտի դիրեկտոր և միաժամանակ գիտա-հետազոտական աշխատանք է կատարում այդ նույն ինստիտուտում։

Իր գիտական գործունեության ընթացքում Վ. Հ. Գուլքանյանը գրել է մոտ 10 գիտական աշխատություն։ Ցորենի [illegible] և բույսերի [illegible] վերաբերյալ, նրա աշխատությունները ինչպես տեսական, այնպես էլ գործնական արժեք ունեն։

Վ. Հ. Գուլքանյանը Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ է։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ ընտրվելու պահին Վ. Հ. Գուլքանյանը ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի նախագահի տեղակալն է։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. Ք. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Հրաչյա Քրիստափորի Բունիաթյանը ծնվել է 1907 թվականին։ Նա ավարտել է Երևանի Պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը։ 1927 թվականից վարում է Երևանի Բժշկական ինստիտուտի բիոքիմիայի ամբիոնը։

1937 թվականին դիսերտացիայի պաշտպանությամբ ստացավ [illegible] գիտությունների դոկտորի աստիճան և հաստատվեց պրոֆեսոր։

Ներկայումս Բունիաթյանը Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի [illegible] է և [illegible] գիտական [illegible] աշխատանք է կատարում։ Նա ունի [illegible] մի շարք արժեքավոր [illegible] նվիրված [illegible] հարցերին։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. Ի. ԻՍԱԳՈՒԼՅԱՆ

Պրոֆեսոր Վազգեն Իվանի Իսագուլյանի [illegible] բազմաթիվ աշխատություններ [illegible] ընկնող տեղ են գրավում [illegible] հարցերին նվիրված [illegible]։ Նրա «Սիֆիլիսի [illegible]» [illegible] ժամանակի ծավալով [illegible]։

Վ. Ի. Իսագուլյանը ծնվել է 1893 թվականին, 1917 թվականին ավարտել է Մոսկվայի [illegible] բժշկական ֆակուլտետը, 1924 թվականին սկսել է գիտա[illegible] և մանկավարժական աշխատանքը։

Պրոֆեսորի կոչումը և բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը Վ. Ի. Իսագուլյանը ստացել է 1936 թվականին։

1941 թվականից պրոֆեսոր Իսագուլյանը [illegible] է Երևանում, ղեկավարելով Երևանի Բժշկական ինստիտուտի [illegible] ամբիոնը և [illegible] Երևանի [illegible] ամբիոնը։